

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիայի գլխավոր վարչության 2016 թ. գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների իրականացման արդյունքների մասին

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի գերակա խնդիրների լուծման նպատակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության արձևաբանության քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունն իրականացրել է հետևյալ աշխատանքները.

Հիմք ընդունելով քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ-ի) A37-11 բանաձևով ընդունված պահանջները և աերոդրոմի շրջանում իրականացվող թռիչքների նավիգացիոն շեղումները նվազեցնելու անհարժեշտությունը՝ «Շիրակ» աերոդրոմում ներդրել է ԻԿԱՕ-ի բնութագրերի վրա հիմնված նավիգացիայի կոնցեպցիան, արդիականացվել են «Զվարթնոց» աերոդրոմի ԻԿԱՕ-ի բնութագրերի վրա հիմնված նավիգացիայի կոնցեպցիայի վայրէջքային սխեմաները և թարմացմամբ է ՀՀ օդային տարածքում Շրջանային նավիգացիան (ԱՐՆԱՎ/RNAV):

Կատարված աշխատանքների արդյունքում 2016 թվականի ապրիլ ամսին Հայաստանի Հանրապետությունում ամբողջությամբ ներդրվել է ԻԿԱՕ-ի բնութագրերի վրա հիմնված նավիգացիայի (PBN) կոնցեպցիան: Արդյունքում՝ Հայաստանի Հանրապետությունը հանդիսացել է ԻԿԱՕ-ի անդամ առաջին պետություններից, որն ամբողջովին համապատասխանում է A37-11 բանաձևով ընդունված պահանջներին:

Բնութագրերի վրա հիմնված նավիգացիայի (PBN) կոնցեպցիան պարունակում է մի շարք առավելություններ, որոնք թույլ են տալիս՝

- կոմերցիոն տեսանկյունից ավելացնել թռիչքների արդյունավետությունը՝ նվազեցնելով ճանապարհի երկարությունը երթուղով և մոտեցման ընթացքում,
- բարձրացնել արտադրողականությունը՝ նվազեցնելով տարածական բաժանման հետազոծերը,
- բարձրացնել անվտանգության մակարդակը նավիգացիոն ճշգրտության բարձրացմամբ,
- օդանավակայաններում կատարելագործել ժամանման սխեմաները՝ բոլոր եղանակային պայմաններում, և պահպանել խոչընդոտների անցման կարևորագույն բարձրությունների պահանջները՝ օդանավի թռիչքի օպտիմիզացված ուղիների միջոցով,
- ուշացումների նվազեցում օդային տարածքում և օդանավակայաններում՝ ներդրելով հանգուցային շրջաններում լրացուցիչ զուգահեռ երթուղիներ և լրացուցիչ մեկնման ու ժամանման կետեր,
- կարգավարական և թռիչքային անձնակազմերի աշխատանքային ծանրաբեռնվածության նվազեցում, քանի որ շրջանային նավիգացիայի ժամանակ օդանավն իրականացնում է թռիչք նախատեսված հետազոծով առանց կարգավարի միջամտության:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի գերակա խնդիրների լուծման նպատակով՝ աշխատանքներ են իրականացվել նաև ավիացիոն անվտանգության ոլորտում:

2016 թվականի ապրիլ ամսին Եվրոպական Քաղաքացիական ավիացիայի կոնֆերանս /ԵԿԱԿ/ կազմակերպության կողմից Եվրոմիության «Ազգային աուդիտ և զարգացման ծրագրի» շրջանակներում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի համակարգում անցկացվել է քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ոլորտի փաստաթղթային աուդիտ, որի արդյունքում ԵԿԱԿ աուդիտի խմբի կողմից առաջարկվել է ԵԿԱԿ Դոկ.30 փաստաթղթի նոր՝ 13-րդ խմբագրության պահանջների համապատասխանության ապահովման նպատակով մշակել և ընդունել քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության որակի հսկողության ազգային ծրագիր:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության որակի հսկողության ծրագրի» ընդունմամբ կկանոնակարգվեն ՀՀ օդանավակայաններում իրականացվող ավիացիոն անվտանգության աշխատանքների որակի հսկողության միջոցառումները, կսահմանվեն ընթացակարգեր կապված ՀՀ օդանավակայաններում իրականացվող ավիացիոն անվտանգության ապահովման աշխատանքների որակի նկատմամբ քաղաքացիական ավիացիայի բնագավառի լիազոր մարմնի կողմից իրականացվող հսկողության տեսակների և միջոցառումների, հսկողության միջոցառումների իրականացման կարգի, ժամկետների, հսկողության ընթացքում բացահայտված անհամապատասխանությունների և թերությունների վերացման հետ կապված: